

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԳԱԿ.

ՀԱՅ-ԳԱՂԱՒՆԻ ԲԱՌԳԻՐԲ. — ԴԱՇԵԱԿԲ ԼԱՄԱՐԹԻՆԵԱՅ. — ԵՐԳԲ. — ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ.

Մեր ազնիւ բարեկամը մեծարգոյ Տ. Ն. Մ. Զօրայեանն ամակիձեւով պատուական հատուած մը կյուղարկէ որ Աղաւնոյս մէջ տպագրեմք: Սիրով կրնդունիմք զայն, զիտնալով որ շատ իսկ կը ճանչնայ մեր ազգը քէ այս մեծարգոյ Ուսումնականին ալ բոլոր աշխատութեանցն ու մտածութեանց նպատակ Հայրենեաց սէրն եւ անոր յառաջադիմութեան նպատակն եղած է: Արդէն իւր մինչեւ հիմա հրատարակած ազնիւ ու պիտանի երկասիրութիւնները ամենուն ծանօթ են ու ամենայն գովութեամբ պատուեալ:

Այս հատուածս ալ անա նոր ապացոյց մի է իւր հարուստ հմտութեանը, ազնուախոհ սրտին եւ ազգասէր եռանդեանը, ինչպէս որ պիտի տեսնեն եւ ընթերցողք:

Կ. Պոլիս, 1 Հոկտ. 1858.

Պերապախա եւ Սրբասուն Տէր.

Ձեր Սրբութեանը Կոստանդնուպոլիս եկած ժամանակը, անձնական տկարութեան պատճառաւ քեզիսեւ չկարողացայ անձամբ տեսութիւն ընելու, բայց վաղուց հետէ չորս գերապատիւ Հարցող պատուական գործքերը կարդալով, կամ մանաւանդ ուսանելով, մեծախոհ եւ ազգիս սիրոյն անձնաւոր ազգակիցներու հետ կենակցութիւն ընողի մը նման՝ Ձեր ազգօգուտ եւ անգին պտուղները կ'ախելի գոնութեամբ, որոց համար պարտաւոր եմ հրապարակել երախտագիտութիւնս եւ շնորհակալութիւնս յայտնելու. որպէսզի նախանձոս ասլախսնէրու կարգը չանցնիմ: Վասնզի կան տեսակ մը եակներ որ ազգայնոց ընտիր մասին՝ ինչպէս նաեւ չորս գերապատիւ Հայրերուդ նման ազգասէր ու անգին անձերու ակնյայտին ցոյց տուած հանձարին, պանծալի երկասիրութիւնն ու փառքերն ու պատիւնն չիմանալ կամ ճանչնալ կ'կեղծեն, իրենց ազգատեանց դիտաւորութենէն ու վատ կրքերէն յաղբուկով: Այս տեսակ եակները համոզելու ամենէն դիւրին միջոցը՝ իմաստնոց հետեւեալ վճիռները իրենց յիշեցնելն է:

Celui pour qui le mérite des autres est invisible, serait assez en peine de nous montrer le sien. (SONIAL DUBAY.)

L'ingratitude est tout à la fois un manque à l'équité et à la probité; une bassesse et un délit. (BONNIN.)

L'ingratitude est ce qui blesse le plus une âme noble: c'est la plus grande monstruosité morale de la nature. (LIVRY.)

L'ingratitude est un vice contre nature; les animaux même sont reconnaissants. (SÉGUR.)

(*) Այս դժբախտութենէ գերծ ընն հաւե մեկ երկու Հայազգի բժիշկ, որ իրենց ամենահարկաւոր գիտութեանը մէջ ճարտար, հմուտ, աշողակ, անշահասէր գրած ու մանաւանդ ազնուարարոյ են, իրենց պտուղներն ալ ամեն օր յայտնի ցոյց կուտան. սակայն երբեմն անիրաւութեամբ կրամբաստին անձինն եւ ընչին պատճառանքներով:

Ուստի պատուական Մասեաց Աղաւնոյն տարիլ, մայիս, յունիս, յուլիս բուռց մէջ ուրախաւեւ երեք նոր մեծ գործքեր կարդալով կ'իւրաւամ յատկապէս անոր համար ալ շնորհակալութիւնս յայտնելու:

Երեք գործքերուն առաջինը՝ ԱՂԱ օտարախորը (ինչպէս լատիւսաձէ կ'ըսեն) բառին՝ պատուական Տէր բառին հետ փոխանակելնիդ է: Այս փոփոխութեան յարմար եւ պատշաճ ըլլալուն վերայ պէտք եղածը Ձեր Սրբութիւնը բաւական յայտնած ըլլալով՝ մեր կողմէն այս միայն կրնամ յանելընել քէ, Տէր բառը տեսնուած ու լսուած ժամանակը ազգասէր անձանց մտքին մէջ մեծութեան եւ պատուոյ գաղափար մը չծագելը անկարելի է. եւ այս մասին շատերն ալ համակարծիք եւ գոհ են:

Երկրորդ գործն է Ձեր յօրինած ԲԱՌԳԻՐԲԸ: Եւ այս գործին հարկաւորութիւնն ու կատարելութիւնները այնպէս զեղեցիկ ու ճիշդ կերպով յայտնած էիք տասներկու տողերով որոց վրայ բառ մը անգամ յանելընել հարկ չըլլալով կ'իւրաւամ նոյն մասին եօրր տողերը կրկին յիշելու եւ անոնց իբր յաւելուած իմ փորձառութենէս ալ քանի մը խօսք անելընելու որ Ձեր յայտնած ճշմարտութիւններուն նոր ապացոյց մը ըլլայ:

« Ազգի մը առաջին գիրքը Բառ-գիրքն է, ըսած են իմաստունք, առ իցուցանել քէ ինչ կարեւոր գործիք է ասիկա « ազգի մը իրրութեանն ու յառաջադիմութեանը համար:

« Այս գիրքը այնչափ անկի հարկաւոր կ'ըլլայ եւ պիտանի՝ « որչափ որ հարկաւոր է այն լեզուն՝ որ բառ-գիրքը կանգա- « մագնէն, ու մի առ մի անոր ձօխութիւնները, փափկութիւն- « ները, առմունքները, կերպերը ընթերցողին երեսան կ'անեն: »

Եւ յիշուի մինչեւ հիմա գաղղիարենէ բարգմանութիւն ընելու պարտաւորեալները՝ գտնուած պակասաւոր բառ-գիրքնէն ինչ նեղութիւն ինչ մտատանջութիւններ կրած են՝ ամենուն յայտնի է. եւ գտնուածներուն մէջ երեք տեսակ պակասութիւնք կան: Առաջինն է, ուսումնական, ճարտարութեան, արուեստից, բնագիտութեան, գեղարուեստից եւ մինչեւ անգամ հասարակ բառերու չգտնուիլը: Երկրորդ պակասութիւնն է գտնուած բառերուն շատին նշանակութիւնը պակասաւոր, եւ շատերուն նշանակութիւնն ալ տարտամ ու անորոշ խօսքերով անհասկանալի եղած, զոր օրինակ, *գիշոր մօտք* է գոյն ինչ, *գուրջուն* ինչ նման ազգասու, *գուրջո* մասն ինչ ժամացուցի, *մեղրա* չափ ինչ Յունաց, *սպաս* կշիռ ինչ Պարսից, *սխալալիս* ծառատունկ ինչ Եգիպտացաց, *սօխիւնակ* խաղ ինչ երաժշտական, *սուպր* զբամ ինչ նախնաց, *սոճ* ազգ ուսկանի, *կշիկ* աստիճան ինչ, *կփխտն* ազգ ինչ պատուաստելոյ գտունկըս, եւ այլն եւ այլն:

Երրորդ բերութիւնը՝ որ ամենէն անելի լուսահատելի է, սա խօսքերն են, *կ քոյս ինչ, կ քուք ինչ, կ պսուդ ինչ, կ քար ինչ, քոյուն ինչ, կ ժուկն ինչ* եւ այլն: Հարկ չկայ յիշել որ այս տեսակ բառ-գիրքներու մէջ լեզուի ձօխութեանց, փափկութեանն ու առմունքներու վրայ տեղեկութիւն գտնուելու աշխատիլը՝ պարագայ յոյս է: Ուստի մեր ամենուս յոյսը՝ Ձեր այս նոր բառ-գիրքին վրայ ինչչափ անկասկած եւ որչափ անտարակուսելի ըլլալը հաստատելու համար կ'իւրաւամ դարձեալ այս ցանկակ գործերնուդ վրայ ձեր գրած տասներորդ տողերը օրինակելու որ ամեն պէտք եղածը կ'պարտնակէ:

« Ուստի զարմանք չէ որ մեր ազգն ալ մասնաւոր սեր մ'ու- « նեցած ըլլայ եւ ցուցնէ Դաղղիարենի վրայ: Իւր բազմա- « կարօտ պիտոյիցը ասիկա անհրաժեշտ հետեւանքն է, հե-

« տեսանք միմեզմասն այս նամաշխարհիկ լեզուին մատու-
« նագրական առատ ճոխութեանը, որ ամեն ազգի ալ ճարակ
« է, բոց մեզի պէս սովալլուկ ազգի մը: Բայց այս լեզուն սով-
« րելու դեռ գլխաւոր միջոց մը կպակսի՝ որ է ԲԱՆԳԻՐԵՐԸ:

« Ասգերանին բաղ-գիրքը քէ եւ զովիկ իւր ժամանակին
« նայելով, բայց շատոնց ճանչցած են ազգային եւ օտար ու-
« տոմանականք՝ քի իւր բազմատեսակ բերութեամբք ուխտուն
« սխալներովը ոչ միայն մեր ժամանակին չկրնար ծառայել՝
« այլ նաեւ շատ վնաս ալ բնէկ երկու լեզուն եւս ուսանողաց:
« Ուստի եւ իրաւամբք շատոնց է որ ազգայինք եւ հայասեր
« օտարք ՀԱՅՏԵՐԷՆԷ-ԳԱՂՂԱՐԷՆ ԲԱՌ-գիրք մը կ'իմտուն : »

Այս մասին վրայ բանի մը խօսք լուսեցընենք պարտք կր-
նամարմն անձնի՝ զիտել տալով որ ասանկ բազմաշխատ եւ
պատուական զործքի մը գնոյն *աժանութիւնը*՝ մեծ պարտա-
ւորութիւն մը կձգէ ամէն Հայազգի ծնողաց վրայ, որ այս բառ-
զիրքէն զոնէ մշմէկ օրինակ ստանան։ Վասնզի անշուշտ
զիտեմ որ այս նոր բառզիրքը՝ ազգայնոց ամենամեծագոյն մա-
սին մեծ *բարեբաւութիւն* մը եւ անգին *գանձ* մը բլլալէն զառ-
կարգ մը ինքնահաճ ու աշխնդակ մարդոց ալ ազգու եւ զօ-
րաւոր զեղ մը պիտի բլլայ։ Այս կարգէ եղողները՝ ծաղրելի
ու անմիտ փառամոլութեամբ օտար ու աննշանակ բառեր
ննարելու ու եղածներուն նշանակութիւնները աշխնդակելու
խայտառկութիւնը՝ իրենց փառք, պատիւ, եւ պարծանք հա-
մարողներ պէտք է որ բլլան։ Այս խօսքիս ճշմարտութեանը
անբիւ օրինակներուն մէջ նետեալայնքը բաւական են
սրտախաղի ուսումն զիտութեան տեքութեանց, *քեօթի* ու-
սումն նուիրական, *քեօթի տօնարի* նրամանական աստ-
ւածախօսութիւն, *դադի* ուսումն ճակատելոյ, *բաղթի* ու-
սումն նշանաց առողջութեան, *անաղթի* ուսումն ներձանելոյ,
միկնաղթի ուսումն քրեական նիւրոց, *միկնաղ* քրեական
նիւրք, *Փիզիզի* ուսումն բարոյասիրութեան կամ բարեզի-
տութեան, *խաւաղեղի* ուսումն զրոշմից, *մեղթօթի* ու-
սումն հնարից, որ մասն ինչ է խօսնելոյ (*լոծի*), *մեղթի* հնա-
րական, *եղթանաղթի* ճարտարախօսութիւն խօսողական,
լոծա *նաղթի* մըմունջ վարդապետական, *դաւեղ* երգանա-
նութիւն, *լոծա* ճաղութիւն, *սօնէքթ* փոքրիկ ննչումն կամ նրն-
չումն կամ ննչեակ- *աքթ* զործաղիք, *տիղթալոն* երբեմնեկո-
րին, *լոծա* կաշի կշռոց, *եղթալոն* վարելութիւն, *սիղթ* բո-
վանգակած, *սիղթալոն* բովանգակածոյ, *աղթի* աշխատացիկ
մեկնութիւն, *սիղթալոն* բարձրաբարձր կամ աշխնդակալ խօսք(°)
լոծա նետեակ, *աղթա* պարգեալ, *եղթի* զգայական,
լոծա զործածական կամ կարեկան, *լոծա* շրջումն, *լոծ-
ալոն* յառաջաղիք, *լոծա* անգլիական դպրոց, *լոծ-
ալոն* ցնորք(°), *լոծ* տեսիլ մտաց, *ալոն* *սիղթալոն* պա-
տանարք Տեղեմարայ, եւ այլն եւ այլն։ Ասոնք այն *հետ* անձե-
րեն են, որ իրենց քաղաքաց մէջ *Պարոն Սիւրի* յալմապակիկե-
նեղը, *Լուր* *խաղի* բանգարանը, եւ ասոնց նման բիւր տը-
զիտական խօսքեր ու բարգմանութիւններ արդեն նրատարա-
կած են եւ կնրատարակեն....

Ազգային լեզուն աղաաղելու միջոցով ծաղրաժու. առաջ-
նորդներուն մեկ այլանդակութիւնն ալ, անուանց տառադար-
ձութեանը համար հնարած անկանոնութիւնն է: Այս խօսքս
հաստատունն առաջ՝ նախ պէտք է ամենուն ծանօթ եղած
շէմաբառերին մը յիշեցնենք, որ է Գերասպետի, Տէր Գարրիկի
Վ., Հօր, Իսր հալլենի լեզուն կատարեալ գիտնալն զատ, ուրիշ
շատ լեզուներ ալ նոյնպէս կատարեալ գիտնալը, եւ բարդ-
մանելու, նկատամբ զանոնք հայացնելու, կարող սակաւարիւ,
առաջնորդաց մէջ գլխաւորաց Նախագահն ըլլալն է: Ուստի

ասանկ պատկառելի անձի մը տառադարձութեան կանոնները հրատարակուելէն ետքը, ինչ լսողգնութիւն, ինչ այլանդակ փառամարիտութիւն է արդեօք այս նորօրինակ առաջնորդներուն բըամը, որ անանկ անաչառ ու ճշմարտասէր զատաւորի մը կանոնաց զեմ՝ ազգը մոլորեցնելու փառամոլութեամբ հրատարակած զիբքերնուն եւ բազկիբքներնուն մէջ հետեւեալներու պէս խորը դժուարութիւն ու շատերուն անհասկանալի ձայններով տառադարձութիւններ բըամ են . զոր օրինակ, աշխարհ, Այուսիդայոյ, Աղրոնսու, Բակովն, Բոյերեաւ, Բուլխոն, Բուրաշու, Բաղդոյ, Գրակոս, Գուլիզմոս, Գաղիլէոս, Գեանէ, Դերեք, Գակղոս, Իսաղիա, Դուդովիկոս, Դակիզմուացիք, Դափոնքն, Դասղակ, Դայրնիք, Դուղլիոս, Դիսիս, Կոդարոս, Կեփիլիոն, Կոդումոս, մեծն Կարսիէն, Հաղլէր, Մոդիւր, Միդսովն, Մաւիլիոն, Մաղեբամշ, Մաղեբ, Նասլոդն, Շիղլէր, Շասուրիսան, Շակասար, Պեսրաիւյ, Պիլիոս, Պասիւղ, Պիսգ, Պուսարոս, Պոպ, Հոակիւս, Հոդղէն, Սափիով, Սասունս, Սարաղոս, Վիգիլիոս, Վոքսք, Տըլիղ, Տակիւ, Փեղիս, Փիղիպպոս, Փիղիւ, Փենեղովն, Փիլոն Վերջապէս արդէն Արկածք Տեղեմաւյ բարգմանուած գրքին անունը այս սոսկալի նշխանակները, Պատմաւք Տեղեմաւյ բարգմաններ են.....

Երբորդ մեծ եւ. փառաւոր զործը Չեր Սրբոյրեան փառակից
վսեմախոն նարազատիդ Գերազատիւ Խորեն Գերբող վարդա-
պետին անգին երկախորտիւննէն եւ. որոնք երկու մասի
րամենով անոնց վրայ զատ զատ խօսելով անգամ րաւական
շնեք կրնար գովել եւ. ոչ ուրախութիւննիս յայտնել :

Ուստի առաջին մասին մեջ պատշաճ դատեցի յիշելու, Արարիչ Աստուծոյ ստեղծագործութեան մեջ, սքանչելի հանձարով, ժսեմ մտքով, վե՛ն սրտով եւ ամեն առաքինութեամբ պատկանելի եւ ամեն ազգաց սիրելի եղած զերազանց ազնուականիմք Ա. Լաւարբիեկայ ԳԱՆՆԱԿ անուն բանաստեղծութեան բարգմանութիւնը, եւ սաոր հետ իւր վե՛նամոլի մտքեւ ուփախով սրտեւ ծնած Լուսին, Օրհնեկայրսիբեկ զեղէ Հայաստան Ռ՛՛ն յիշեցի՜ զՀայաստան, Ասզ Երեկոյիկ, Ասզ Առաւօտ, եւ ուրիշ չքնաղ երկասիրութիւնները՝ որ ասոնցմէ առաջ ու վերջը նրատարակած է ։

Երկրորդ մասին մեջ կիշենք, ապրիլ, յունիս յուլիս, և սեպտեմբեր ամսոց մեջ Անձուխի Հայրենեաց, Աղօրք վասն Հայրենեաց, Հայկազն մօր Յօրք, Վանան Մաթիկոնեան անուններով նրատաքական սրտաշարժ և ուրախաօր կրկասիրութիւնները դաշնակի վրայ յարմարցուցած : Այս գործքերը որչափ առաքինի խորհրդով ու բարենախանձ սրտի մը ծնունդ ազգագրաւորութեան, կուգեմ որ վերոյիշեալ իմաստունները իրենց վճիռներովը հաստատեն :

Négliger l'éducation des filles, c'est préparer la honte à sa propre famille. (CHINOIS.)

Les femmes sont les fleurs brillantes de l'humanité et des créatures délicates, dont la faiblesse implore notre appui. (JULIEN.)

Une belle femme plaît aux yeux ; une bonne femme plaît au cœur : l'une est un bijou, l'autre est un trésor. (NAPOLÉON.)

On aime d'ordinaire les belles femmes par inclination : les laides par intérêt, les vertueuses par raison. (ANCELOT.)

Les mœurs sont si corrompues, que le mot même de chasteté est devenu suranné et presque ridicule. (DE LEVIS.)

Ուստի՛ր քե՛ որ մտածենք՝ որ ամեն բանի յարգը՝ զօրծին վրայ չէ՛, այլ՝ զօրծողին՝ ղիտաւորութեանը վրայ, ինչպէս՝ չորախանանք, ինչպէս՝ չղովենք՝ գերապատիւ Հարազատիդ նայրենասէր՝ բարենախանձը, որ իւր ազնուական սիրտը՝ շարժներ ատանկ՝ գերազանց առաքինութեան մը ձեռնարկելու . զի գովութիւն բառական կրնայ ըլլալ՝ երբոր՝ մտածենք քե՛, այս նշգրկութեան միջոցով՝ նուազագոյն սրտաշարժ՝ զգացմանց հետ անմեղ

օրիորդաց մտածմունքը ազնուացնելու, զանոնք ամենատեսակ առաքինի ու հայրենասեր բողոքներով վառելու, ու անոնց սրտին մէջ ազնիւ ու համեստ զգացմունք ազդելու միակ յարմար եւ ազդու միջոցն է :

Վերջապէս, երբոր մտածենք քե այս կարգ ազնուական սիրոյ սուրբ երգերը բառական ըլլալով միպատանական պարսառելի ու վնասակար մոլութեան (չլսեմ տոբանաց) երգերը հեռացնելու, ու անոնց անմեղութիւնը, պարկեշտութիւնն ու փափուկ համբար անարատ պահելու միակ նշօր ու օկտակար միջոցն է : Եւ յիշատի քե որ մեր խղճին ձայնին լսենք ու արդարասիրութեամբ դատենք՝ գերապատիւ Խորեն վարդապետին այս գործքերուն որչափ մեծ ու նրբափ անգին ըլլալը կրկին կրողում իմաստնոց սրտշմանը . վասն զի անոնց *դասուիք՝ անդին « մեմք խմաստուն ենք, մեմք մեծ ենք, մեմք ամեն բան գիտենք... »* բողոքներու դատողութիւնն շատ արդար, ճիշտ ու հաստատ է. զօր օրինակ.

Le motif seul fait le mérite des actions des hommes, et le désintéressement y met la perfection. (LA BRUYÈRE.)

L'impérissable souvenir d'une bonne action répand sur toute notre vie un parfum de bonheur. (LACROIX.)

La véritable élévation est une disposition sublime de l'âme; son effet est d'inspirer au cœur de nobles sentiments.

(FÉNÉLON.)

La générosité est la plus belle et la plus aimable des qualités dont l'âme humaine puisse être ornée. (LACRETELLE AÎNÉ.)

Il faut un goût bien délicat pour être vraiment bienfaisant; mais ce goût est rare. (MALESHÈRBES.)

La véritable gloire est une grande réputation fondée sur les services qu'on a rendus à sa patrie. (CICÉRON.)

Ուստի ազգերնուս իրօք փառք ու պարծանք եղած Դպրոցնէդ իրենց անգուսպ գաւակները ետ առնող եւ անոնց կուսակից շահասեր շողոքորները մէկ ըլլալով մեզի հարցունեն քե, « Ինչո՞ւ համար մեր կրթեալ ու բարի գաւակները ձեր այսչափ գոված անձերնուդ քով բան չսովբելով տոգոնութեամբ ետ գալ ուզեցին ու մենք ալ պարտաւորեցանք զանոնք ետ բերելու » : Մեր ասոնց պատասխանը այս է. Գուք բնաւ չէք հմանիր այն ազգասեր, առաքինի ու բարեսեր հայրերուն, որ Դպրոցին օգուտը եւ Ուսուցչաց ազգասեր խնամակալութեան յարգը ճանչնալով, գաւակին խրկուած օրէն մինչեւ ցայսօր բողոքած են, մինչեւ վերջն ալ սկիտի բողոքն գոնութեամբ : Գուք ձեր անգուսպ գաւակները խրկած ժամանակնիդ, արդեն ձեր անխոհեմ ու պարսառելի օրինակներովը անոնց բարքը եղծուած էր : Գուք անանկ հայրեր էք, որ բնաւ սովորած չէք Սողոմոնի սա խօսքերը . « Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, « իմանալ զբանս հանճարոյ, իմիտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ եւ ուղղել զիրաւունս : Սկիզբն իմաստութեան երկիւղ » Տեսուն, հանճար բարի որ առնեն զնա » : Գուք անանկ հայրեր էք, որ ձեր գաւակները չվշտացնելու համար իրենց բոսած չէք սա խօսքերը . « Լուր որդեակ խրատու հօր քո, եւ միմեծեր զօրէն մօր քո, զի պսակ բնկալցի զլուս քո, եւ մանեակ ոսկի » խաբարանցի քում : Լուր որդեակ եւ բնկալ զբանս իմ եւ բազ « մասցին ամբ կենաց քոց : Որդեակ մի նախանձիր ընդ շարս » եւ ցանկանայցես կալ ընդ նոսա . զի ստութիւն խորնի սիրտ « նոցա, եւ ցառախօսին շրբունք նոցա : Իմաստուն լեր որդեակ « զի ուրախ լիցի սիրտ քո, եւ դարձն իբեկ զբանս նախատա « նաց » : Այս տեսակ հարկաւոր խրատները իր գաւակներուն չտուող հայրերու համար բոսած է . « Զիմաստութիւն եւ բզ « խրատ ամբարիշտք անգոսնեն : Ամենայն այլ երեսի անձին « խրում արդար . բայց ուղղէ զսիրտս Տէր : Պիղծ է արդարոյ « այլ անօրէն, եւ սկիզբէ անօրինի ուղիղ ճանապարհ : Մի խնա-

« լեր խրատել զտղայ, զի երէ հարկանես զնա գաւազանաւ » « ոչ մնաւի . դու հարկանես զնա գաւազանաւ . բայց զանձն « նորա փրկես իմանուանէ : Որ գիմաստութիւն եւ զխրատ ա « նարզէ » քշուառական է . եւ ընդունայն է յոյս նոցա եւ վա « տակ նոցա անօգուտ, եւ անպիտան զործք նոցա » :

Գուք անանկ հայրեր էք որ ձեր գաւակները Հայկազեան Վարժարան եղած ժամանակնին իրենց դասարանաց, կերակուրի եւ դպրոցական ուրիշ պէտքերու համար եղած ծախքերը անգամ չվճարեցիք Զեզ նման խորբարարոյ եւ անխրատ հայրերու համար առաքինի եւ զգօն անձինք, որ Աստուծմէ կվախնան եւ իմարդկանէ կամբնան երկու վճռով ձեր ճիշտ նկարագիրը յայտնեք են :

La véritable gloire est comme le vrai mérite : celle qui s'ignore est ordinairement la plus grande et la plus solide. (M. VARÉRY.)

Ne verse pas les bienfaits sur les méchants; c'est semer sur les vagues de la mer. (PHOCYLÈDE.)

Գերապատիւ եւ Ազգասեր Սուրբ Հարցոյ հարազատաց անկեղծ սիրոյ յարգանքս նուիրելով .

Մնամ միշտ անձնանուէր բարեկամ

Ն. Մ. ԶՕՐԱՅԵԱՆ.

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՅԱՎՈՎԷԱՆ. Ազգասեր վարժապետ է ի Պորուշան, ուր մեծ գովութեամբ իւր պաշտօնը կկատարէ : Հետեւեալ ազնիւ տողերը իւր ուս մեզ գրած մէկ նամակէն կառնուիք :

Ազգասեր Հայր, գերապատիւ Տեսուն Խորենայ զանմահական քերրուածոց գովեստից պսակս հիւսել մի միայն Խորենեան Քերրոջաց քաջայարմար եւ զեղապատշաճ զոյ գիտեմ : Ուստի եւ զայլոց տկարագունից ոմանց լիաբերան եւ մեծաձայն եւս գովեստսն իբրու մօայլ համարիմ առ լուսով իմաստից քաջի Քերրոյին, համահանգեալ գտեալ նոցա անվարժ նկարչի որ զլիւցազանց պատկերս նկարագրեցի :

Շատ է ինձ ծանուցանել իդիտութիւն այսչափ, երէ որք միանգամ զեր իբրու ծայրիւ մատին եւեր զճաշակ առեալ են զգրաւոր լեզուին եւ զգեղեցիկ հանճարոյ բանաստեղծութեան՝ այնուհետեւ վառեալք բորբոքեալք իսէր անգուգական քերրւածոյս է զի այլ յայլմէ լինին յերազեն կամ զՄայրն Հայաստան առ օտիւք խնդրել որոնել, եւ է զի բղձավառ լինին զեր գոսկերսն իմոց նորին հանգուցանել :

Իսկ ըստ իս առանձինն եղուկ համարիմ անձին զի զուրկ գտանիմ իգեղեցիկ արուեստէ երաժշտութեանն, եւ ոչ միայն ես այլ եւ ամենեքեան որք իբրեւ զիսն ենաստանօր Հայկազունք. քանզի եւ առ իզանձուկ սրտիս յազեցուցանելու առ Գերմանացի ոմն դաշնականար զնացի հնչեցուցանել զԱննուկան եւ զԱղօթսն վասն Հայրենաց, յորոց մինչեւ իխօր սրտիս ներգործեալ կրկնեցի եւ երեքիկնեցի եւ ես զմայլմամբ եւ եռանդեամբ, *Տէր, կեցն զՏէր Խորեն*. ընդ որում ու Ազգասեր Հարք, կեցջիք երջանիկ, կեցջիք չորեքին երկայնաւորքք եւ անսրտում, յառաւել բարգաւաճանս Ազգիս, որում զօնիք անձնանուէր :

Գերապատուութեանց Զերոց

Ամենախոնարհ Ծառայ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՅԱՎՈՎԷԱՆ.